ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 398 *ք.Արտաշատ*

„20" հունվարի 2026թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-ի N 48 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի «Պետական կառավարման համակարգի մարմինների ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված պետական սեփականություն հանդիսացող շենքերն ու շինությունները (տարածքները) պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնելու մասին» N 346-Ն որոշման պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի՝ ներառյալ դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի հանձնման–ընդունման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Նախագահ՝ ՀՀ Արարատի մարզպետ Սեդրակ Թևոնյան

անդամներ՝

Արարատի մարզպետի աշխատակազմի՝

ֆինանսական վարչության պետ Լեռնիկ Խաչատրյան

քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության, հողաշինության բաժնի պետ Ոսկան Միսակյան

առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Հայկ Բադալյան

կրթության, մշակույթի և սպորտի վարչության
ավագ մասնագետ Սուրեն Շահինյան

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2024 թվականի փետրվարի 26-ի «Հանձնաժողով ստեղծելու և ՀՀ Արարատի մարզպետի 2020 թվականի օգոստոսի 13-ի N144-2020 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 48 որոշումը ճանաչել ուժը կորցրած:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**